

# Հ Ն Չ Ա Կ

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ



ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑ.



ՆԱԶԱՐԷԹ ԼՈՒՍԻԿԵԱՆ.\*

### ՍՏՈՐ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ.

Ստոր բնագրներն իրանց համար գտել են ազատ ասպարէզ: Ապականվածները պարարտ հող են դառել ցանելու անբարոյականութեան սերմերը: Ուխտապարտութեան առիթ է ընկել լիտիաբար ցուցամուլ լինելու իրանց ուխտապարտութեամբ: Ազգի առջև յանցապարտներն ու դաւաճանները յարմար ժամանակ են տեսնում այսօր ամեն տեսակ ներքին գրգռիչ խնդիրներ առաջացնելու՝ ազմուկի մէջ իրանց յանցանքները մոռացնել տալու ճիգով: Այն, ինչ որ անպայման կերպով զնահատվում էր երէկ, այսօր թաքուն նպատակներ ունեցողներն, որպէս և փառամուլները, նախանձոտներն ու շահախնդիրները հարկ են համարում ըստորացնել: Յեկն ու աղբն է, որ շարժվում է իր տեղից և իր ասպականիչ ու վարակիչ հոտն ու նեխանքը տարածում չորս կողմ:

Երէկ, երբ աղբը վառված էր յոյսերով, երբ կարծում էին, որ հայկական դատը պէտք է շուտով ստանայ բաւարար լուծում, այդ բոլոր վառ բնագրները չէին յանդգնում երևան գալ յոյսի պայծառ արևի տակ: Իսկ այսօր, երբ հայ ժողովուրդը՝ հալածված անլուր կատաղութեամբ՝ ընկած է յետին թշուառութեան մէջ և վհատութեան զգացումն է սկսել նրան պաշարել, անխիղճ ու ստորաքարչ շառլատաններն էլ իրանց

զլուխներն են բարձրացրել հայոց ներկայի մթազնած հօրիզոնի տակ: 'Արանք ուզում են անել այսօր այն, ինչ որ երէկ չէին յանդգնիլ մտածել անգամ: 'Արանք ուզում են իրանց անխոստովանելի միտումների համար զոհել ու կործանել այն, ինչ ձեռք է բերված անթիւ ու թանկ զոհաբերութեամբ և հստայական աշխատութեամբ:

Ազգերի մէջ ամեն ժամանակ եղել են այդպիսի երևոյթներ, երբ ազգային օրհասական տազնապի լրոպէին ամեն վատութեան ու ստորութեան ախուր ասպետները փորձել են ի վնաս ճշմարտութեան և ընդհանուր շահի առաջ գլորել ներքին երկպառակութեան ու շփոթութեան խնձորը և, ինչ զնով էլ որ լինի, յագեցում սալ իրանց կրքերին ու գաղտնի դիտումներին: Արծաւորը՝ հաւատքի քողի տակ, աշխարհականն՝ ազգային, հասարակաց շահի անուան տակ — հազել են իրանց անաւօթ երեսներին անթափանց ու խաբող դիմախներ և զինված իրանց զիրքի համապատասխան թունաւորված նետերով, ճիգ են թափել մտնել ժողովրդի սրտի մէջ, եւրբեք ու խառնշտկել նրա զգացումներն իրանց կեղտոտ մասներով, օգուտ քաղել նրա հոգեկան վհատված տրամադրութիւնից և չարաչար շահագործել նրան:

'Արանք ձգնել են այդպէս անել և՛ թէկուզ հէնց լրոպէի համար՝ հասած լինել իրանց սև նպատակին:

\*) Կենսագրութիւն տես «Հնչակ» Թիւ 2. 1896.

Պատուութիւնն այդպիսիների ճակատին դրօշմել է Մեհրուբան անունը: Եւ այդ անունով նրանք մնում են միշտ սերունդների նախաօրինակ տակ դարուց դար: Պատուութիւնն այդպիսիների անուններն արձանագրել է ամօթի սեւ տախտակի վրայ, իբրև վատեր, որ ազգային ամենաճանր վայրկեանին ճիգ են թափել իրանց մնասակարութեամբ ու խարդախութեամբ պղտորել ու շփոթել հասարակաց կարծիքը, այդպիսով վտանգի ենթարկելով սուրբ դործեր և ազգի ճակատադիրը:

Հայ ժողովուրդն իր ներկայ սոսկալի վիճակում պէտք է չը մոռանայ բնաւ պատուութեան ահաւոր դասերը և չը խաբվէ հրեշտակային կեղծաւոր զիմակից, որի տակ թաքնված են նենգաւորներ ու խարդախներ: Հայ ժողովուրդը պէտք է իր թուքի հետ կոխկրտէ այդպիսի մարդկանց, որոնք դարձած են գործիքներ Նազըմների ձեռքը և կամ ստորաքարչ կրքերից ու սեփական վատութիւնից դրդված՝ լքութեամբ ու անամօթ խաբեբայութիւններով ճիգ են թափում իրանց եսական բնազդներին յազուրդ տալով՝ դժօխային մի գործ կատարած լինել ազգիս զլինին:

Այդպիսիները պէտք է դուրս շարտվեն ամեն ազգային շրջաններից իբրև դաւաճաններ, իբրև շահախնդիր շառլատաններ, իբրև ազգակործան եսամոլ խաբեբաներ: Այդպիսիներից պէտք է զգոյշ լինի ազգը, որ՝ պոկելով զիմակը նրանց երեսից՝ նրանց պէտք է ցցէ իրանց արժանի ամօթի պատուանգանի վրայ ի ցոյցս հայութեան, ի ցոյցս մարդկութեան և ազգային զգուանքն ու ատելութիւնը դրօշմէ նրանց սեւախորհուրդ ճակատին:

Եւ սպա — առանց յուսահատվելու, առանց լքանելու պէտք է ամփոփել ազգիս ազնիւ ու անկեղծ ոյժերը և ընթանալ միշտ դէպի առաջ:

**ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԴԻԽԱՆԵԱՆՑ.**

(ՄԱՐՏԻԿ ԼԵՈՒՆԵԱՆՑ)

Իր կեանքը... Երկար եղաւ միթէ նա... Հազիւ սկսած ծաղկել՝ անգութ մանգաղով նա կտրվեցաւ յաւիտեան: Մի կեանք՝ եռուն զգացումով, — այո՛. մի կեանք՝ ազնուագոյն մտքով տոգորված, — այո՛. բայց մի կեանք այնքան կարճատեւ, այնքան արագասահ, որ եկաւ ու անցաւ, ինչպէս երազ, ինչպէս տեսիլ, ինչպէս գարնան մէկ ասուպ, որ հայոց կեանքի հօրիցմում երևեցաւ, փայլեց և սպա շուտով մարեցաւ... Այդ ազնիւ սիրալ, որ գիտէր բարախել այնքան ուժգին այն նպատակի համար, որը նրան բաբախեցնում էր. այդ քաղցր ու համեստ, բայց և հաստատամիտ ու վճռական բնաւորութիւնը, որ ջնջութիւն ու կրակ էր հաղորդում այն գործին, որին ծառայելու համար էր ըստեղծված, այդ միտքը՝ խոհուն ու համարձակ, անխնջ

ու շիտակ, բարձր ու մշակված. — ո՛չ, այդ ամենը չը պիտի այդպէս շուտ չքանային, զոկելով իրանցից այն ժողովուրդին, որն այնչափ պէտք ունի այսօր իր սակաւաթիւ հազազաւա զաւակների կեանքին ու աշխատութեան... Եւ սակայն նա չըկայ այլ ևս... և նրա ազնիւ կերպարանքը, որ կարծես միշտ մեր աչքի առաջն է օրհասական օրից ի վեր, նրա կերպարանքը մի նորոգված կակիծով ու ցաւով առաջ է բերում մէկ ուրիշ ստուեր, որ երբէ՛ք չէ բաժանվում մեր մտքից: Մարտիրոս Սարուխանեանց և Բարսեղ Զաքարեանց, ինչ քաղցր անուններ. երկուսն էլ գրեթէ միեւնոյն հասակի — հազիւ 23 տարեկան, երկուսն էլ ընկան սուրբ գործի պատերազմի դաշտում, մէկը 100 կտրիճ ընկերներով ընդդէմ 20000-ի, միւսը 7 ընկերով ընդդէմ 700-ի, և երկուսն էլ կուռելով իբրև հերոսներ և ընկնելով անձնուրաց ու անմահ նահատակներ՝ մի և նոյն ժողովուրդային դատի համար, մի և նոյն դրօշի, Հնչակեան դրօշի, տակ, միևնոյն յաղթական կոչով դէպի ազատութիւն, դէպի կատարեալ ազատութիւն: Մէկը Մարզոտնում, միւսը Ղանում՝ թշնամու հաղաւոր դնտակների կարկուտի տակ, երկուսն էլ խրախոյսն ու քաջալերը, առաջնորդն ու հօգին իրանց ընկերների, որոնք իրանց քաջ մահով կապվեցան նրանց երկուսի անուան հետ յաւիտեան կերպով, անուններ, որ կրում են փառքի փշէ պսակն իրանց ծաղիկ հասակի ճակատի վրայ:

Մարտիկն, ինչպէս միւսը՝ Բարսեղը, պատկանում էին նոյն խմբին, որ դեռ այդ երկուսն էլ իրանց պատանեկան հասակում կազմել էին Բաղուրի Բէլալեան զպրոցում: Մարտիկն էլ, ինչպէս Բարսեղը, Շուշի (Վովկաս) քաղաքում է ծնվել: Մարտիկն էլ, ինչպէս Բարսեղը, ուսանող էր, երբ գալով Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնը, իր ջերմ փափազը յայտնեց ու թախանձեց գործել թիւրքաց-Հայաստանում, իր կեանքը ու ապագան ամբողջովին նուիրելով հայ յեղափոխական գործին: Մարտիկն ուսանող էր Ս. Պետերբուրգի Տէխնոլոգիկական բարձրագոյն դպրոցում: Ղանված յեղափոխական կայծով և դարուս ամենաբարձր գաղափարներով, նա, ինչպէս Բարսեղը, յանցանք համարեց դեռ նստած մնալ ուսանողական նստարանի վրայ, երբ իր հայրենիքը հեղեղվում էր արեան մէջ, երբ իր ժողովուրդի գոյութեան ու ապագայի խնդիրն էր առաջ դրված, երբ ամեն-մի հայ սրբազան պարտականութիւն ունի իր ոյժն ու միտքն այդ օրհասական խնդրի լուծման ծառայեցնել: Եւ 1895 թ. մայիս ամսին նա գնաց Ղան իբրև Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչ: Նա իրան կեղծ մականուն ընտրեց Լեոնեան անունը, երբև յիշատակ իր անմուտաց ընկերի, Զաքարեանցի, որի կեղծ անունն էր Լեոն: Նա գնաց, ուխտելով իր Բարսեղի վոճէն առնել: Եւ նա առաւ այդ վոճէժը, բայց ինչ ծանր գնով. — միւսի սպանման վըրէժի համար նա ինքը սպանվեցաւ, և սպանվեցաւ Ղանի այս ամառուան պատմական կոիւնների միջոցին, կռուիւներ, որոնց տաղանդաւոր վարողն ինքը Մարտիկն էր, որ և անպատմելի հերոսութեամբ կուռեց թշնամու դէմ մինչև իսկ այն ժամին, երբ իր բոլոր հարիւր ընկերներն էլ սպանված՝ ինքը մենակ էր մնացել միայն երկու ընկերի հետ պատերազմի դաշտում: Այն մեծ ծառայութիւնները, որ արել է Մարտիկն իր մի տարուայ գործունէութեան ժամանակամիջոցում Ղասպուրա-

կանու՛մ, այսօր չեն ուրանու՛մ իր հակառակորդներն անգամ, և ապագան աւելի որոշ կերպով կը գծագրէ այդ անմուտաց ու հաղապետ գործիչի դերն ու արժանաւորութիւնը Վասպուրականի վերջին տարւայ յեղափոխական գործերում:

Մարտիկի տարաժամ մահը մի խիստ ծանր կորուստ է հայ յեղափոխական գործի համար, որի սուղբ ասպարէզում մէկ առանձին փայլուն ու սրտաուռ շքրջանակի մէջ է ամփոփու՛մ նրա քաղցր անունն իր ընկեր Բարսեղի քաղցր անուն հետ, մէկ առանձին և ուրոյն տեղ գրաւելով հայ յեղափոխական գործի անմահ արձանի վրայ: Մարդ մի խորին տիրութեամբ է համակվում այդ երկու թանկագին և դեռ տաք դիակները առջև, որ ծակծկված են վատ թշնամու գլխազաններով ու սուլիներով: Մարտիկ և Բարսեղ, մինչև այսօր հայ յեղափոխական գործում նրանք ներկայանում են իբրև մէկ առանձին զոյգ, ուրոյն, օժտված բարձր արժանիքներով, վառվառն՝ իրանց դեռահաս տաղանդով, անձնուէր՝ իրանց հարուստ ու սիրող սրտերի ամբողջ զօրութեամբ, օրինակելի՝ իրանց մեծ գործով և անմահ՝ իրանց մահով: Բարսեղն այսօր հանգիստ քնած է Մարդուանում, քնած է սառ հողում այն երկնքի տակ, որ այնքան սիրում էր նա: Մարտիկն... աւաղ, նրա թանկագին ու սիրելի մարմինը կորած է մեզ համար. մենք չը գիտենք, թէ ինչ եղաւ նա բարբարոսների ձեռքի տակ... Վասպուրականի գեղանի դաշտերն ու հովիտներն՝ ամեն մի քայլափոխում միշտ կը յիշեցնեն Մարտիկի հետքը. Վասպուրականի լեռները դեռ երկար, երկար տարիներ արձագանգ կը տան Մարտիկի խրոխտ ձայնի քաջարի կոչերին. Վասպուրականի հոսուն ջրերը դեռ երկար կը հնչեցնեն հայոց ահանջին այն փառքի երգը, որ երգում էին նրանք Մարտիկի ահանջին, երբ սա մերձիմահ փակում էր ընդ միշտ իր արծուի աչքերը. և Վասպուրականի այն վայրում, ուր պաղեցաւ նրա անգին մարմինը, այսօր բուսած է նրա ազնիւ արիւնով ներկված կարմիր մի ծաղիկ... Կանգ առնենք դրա դիմաց և գլխաբաց ծունր իջնենք այդ ծաղիկ առաջ՝ վռէժն ու դառնութիւնը մեր սրտում և արտասուքը մեր աչքում:

ԱԿՆ — ԵԱՆՑ.

ՅՆՏՈՒԿ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ.

Փափկասիրտ սուլթանը, զգացված մեր ազգային թըշուուաութիւնից՝ որին նա պատճառ չէ հէնց նոյնչափ, որչափ գայլը դառը պատառելուն, այդ փափկանկատ անհատը պատիւ է արել մի յատուկ առաքելութիւն ուղարկելու դէպի հայ յեղափոխականներս, և այս վեց ամսւայ ընթացքում այդ երրորդ անգամն է, որ մեր հայրախնամն անում է մեզ այդ պատիւը: Մի մարդ, որ մէկ անուն ունի ազգիս մէջ, ստիպված հընադանդելով սուլթանի հրամանին, իր որդուն կառավարական դանձարանից դրամ է տվել այդ յատուկ առաքելութեան partie de plaisir-ն անելու դէպի Եւրոպա: Թէև ինքն առաքելալը հաւատացնում էր, որ հայ յողպայինների կողմից, է գալիս, բայց Բիւզանդիոնի երկնքի տակ առապելներ հեշտ են կազմվում: Ի՞նչ է ուզում սուլթանը հայ յեղափոխականներից: Գովեստանը կարգալով յեղափոխականներին «ջանքերին, անձնուիրութեան, եռանդին և աղբյւրին ինքնաձանաղութեան»,

նա, սուլթանը, յայտնում է, որ շատ դո՛հ կը լինէր, եթէ գաղարենք մենք գործել նրա դէմ... որովհետև արաբական հէքեաթներում պատմվում է, որ իբր թէ սուլթանն իր երկիրը խաղաղելու ջանքն մէջ է, թէ հայերին պէտք է տայ ու՜թօրմներ և այլ ոսկեղօծեալ գեղահատներ: Արաբական հէքեաթը շատ հին լինելով և շատ անգամ լւված և վերջ ի վերջոյ լինելով ո՛չ այլ ինչ, եթէ ոչ լոկ ձանձրացուցիչ հէքեաթ, խեղճ առաքելալը շատ քրտնեց ի զուր տեղն իր սերտած ճարտարախօս սոխակի երգերով շնչակեան Կուսակցութեանս առջև... Մեր կողմից նրա գլխին խրատներ կարգալուց յետոյ՝ յաճնարարվեցաւ նրան, որ երթայ Կ. Պօլիս, տանէ սուլթանին մեր հետեւեալ կարճ պատասխանը. — «Գահիճ, ոճրագործ, ընկե՛լ ևս թակարգը և քանի որ մեր մէջ կայ շունչ՝ մենք կը ջանանք ջախջախել քո իշխանութիւնը, աղուէս»...»

ԱԿՆ — ԵԱՆՑ.

ՏԵՂԵԿԳՐՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆԻՅԻՑ.

1896. սեպտեմբեր 15.

Կոտորածի և սարսափի օրերէ յետոյ՝ Իտալիոյ և Անլիոյ հիւպատոսները ջէյթունէն քաղաքս վերադարձան և նորանոր քննութիւններ բաց անելով, ամեն ճիգ թափեցին խաղաղութիւնն ու հանգստութիւնը վերահաստատել: Այդ միջոցները, որպէս քննիչ, Պօլիսէն այս կողմերը եկաւ Յոզ հաննէս էֆէնտի աւնունով մի մարդ: Կառավարական պաշտօնեաների և հիւպատոսների հետ միասին քննելով արձանալրեցին կոտորածի ատեն ժողովագի ունեցած կողպուտներն ու թալանումները և յետոյ առաջարկեցին իւրաքանչիւր թաղի հայ և թիւրք մեծամեծներուն ստորագրել: Սակայն թիւրքերը մերժելով՝ մի միւր չայերը ստիպուած ստորագրեցին: Սոյն գործողութիւններէ յետոյ տեղս եկաւ Ադէշ Մէլթօն անունով մի եւրօպացի, որը առանձին քննութիւններ կատարելով՝ մինչև այժմ բոլոր սպանուածների և վրասների ցանկերը, հաշիւները պատրաստեց. նաև 14 տարեկան մի հայ աղջկայ միջոցով գտաւ Եէնիճէ Գալէ սպանուած փաթիլի դիակը: Թիւրք կառավարութիւնը աշխատեցաւ Եէնիճէ Գալէի Փրաչիսկեան միաբանութեան վանքի տեղ, որը հրդեհուեցաւ թիւրքերի կողմէ, մի ձմեռանոց շինել, բայց Իտալիոյ հիւպատոսն ու Ադէշ Մէլթօն հակառակելով թոյլ չը տուեցին:

Հիւպատոսների Ադէշ Մէլթօնը քաղաքս դանդա՛ծ միջոցները թիւրք խուժանոր և դիւտորները չէին համարձակել: Բացարձակ կերպով հարստահարութիւն, սպանութիւն ևն անել, և հայերը բաւական ազատ կը կարողանային երթևեկել բազարը և փողոցները: Ադէշ Մէլթօնի և հիւպատոսն՝ ր՝ մեկնելէ յետոյ մի յոյն քաղաքս մնաց որպէս Գաղղիոյ հիւպատոս: Այնուհետև բանակի Միւշիւրի խիստ հսկողութեան շնորհով՝ հետզհետէ՝ յարաբերութիւնները ճշգուեցան, առևտուրը վերսկսաւ և բանտարկեալների մի մասը՝ Ջէյթունի բանակցութեան պայմանների շնորհով, մի մասը՝ կաշառ տալով, մի մասն ալ անպարտ արձակուելով՝ բանտերի մէջ մնացած էին մօտաւորապէս ութսուն հայեր: Այդ բանտարկեալների մէջ կը գտնուէին 13 հոգի քիւմլէթ թաղէն, ամբաստանուած ինքնապաշտ-

պանութեան համար դիմագրողի յանցանքով. ասոնցմէ 3-ը անցեալները թունաւորուելով սպաննուեցան կառավարական պաշտօնեաների կողմէ. 3 հոգի ևս, Զէյթունցի Ռոնալդի Գէորգ, իր տղան և փեսան, դատապարտուեցան, առաջինները՝ 15-ական և վերջինը 3 տարի բանտարկութեան. իսկ մնացեալները անպարտ թողուեցան: Այս շաբաթ Քէօյնէքօի Սպաննութեան խնդրի պատճառով վաղուց ի վեր բանտարկուած 13 հայերի դատավարութիւնը պիտի սկսի:

Օէյթունի բանակի հրամանատար էտհէմ փաշան 3 վաշտ զինւորներով քաղաքս կը մնայ: Զինւորները վերին աստիճանի խեղճ և ստրուկ են: Մէքսիսի ըտտիֆ վաշտը քաղաքիս մզկիթներու և Հայոց սներու մէջ ցրուած է. երկրորդ վաշտը բերդի շուրջը վրանների տակ կը շնակի: Վերջերս բերդի մէջ սենեակներ շինել սկսած են ձմեռուայ համար. իսկ երկրորդ վաշտը կը բռնակի փլատակ ձմերանոցի մէջ, որո քաղաքիս հիւսիսային կողմը կը գտնուի, դարձեալ վրանների տակ: Զինւորների խեղճուկ և կարօտ վիճակը աննկարագրելի է: Գլխարկները հին, իւղոտ, զգեստները պատուած, ոտքերը բոսիկ: Կոտորածների ատեն հայերէ թալանուած ապրանքները ծախելով եւմէնի և հագուստ կը գնէին. մինչև այժմ համարեա այդ կողպուտներով կապրէին. թակայն այժմ սպառած լինելով այդ բոլորը՝ ստիպուած գողութեան և ուրիշ ստոր միջոցների կը դիմեն մի միայն անօթի չը մեռնելու համար: Հինգ փարայի կարօտ լինելով զինւորները հայերին կը դիմեն և Աստուծոյ անունով թիւթիւնի և հացի համար մի մէթալիք (տասը փարա) կը մուրան. մի ժամանակ հայոց այգիներէն ածուխ պատրաստելով կը ծախէին և թիւթիւնի փարա կը վաստակէին, սակայն այժմ գետիները նետուած վառուած սիկարները հաւաքելով կը բաւականան:

Հայ և թիւրք խնուութեանները, պսգալները, մսավաճառները բոլորովին շուարած են զինւորների ձեռքէն. ամեն օր խուժը-խուժը քաղաքը կը պտտին և ինչ բանի հաւանելու լինեն՝ անարգել կը յափշտակեն ու կը տանին: Մի քանի օր առաջ մի խուժը զինւորներ անօթի մնացած լինելով՝ կը յարձակին մի քանի բաց խնուութեան լոյս և միս, ոչխար, իւղ ևն թալանած կուզեն հետանալ. հայերը այս անգամ կընդդիմանան, տեղի կուտենայ մի կռիւ, ի վերջոյ զինւորները առած իրենց աւարները կը մեկնին: Հայերը բողբեցին կառավարութեան, սակայն փոխանակ ուշադրութեան անուշուշու իրենց բողբը՝ անլուր հայհոյանքներով ու նախատինքներով կը վռնուին:

Բացի քաղաքէս՝ մի վաշտ ըտտիֆ կը նստի Եէնիճէ Գալէ, մի վաշտ՝ Գըռնուզ, չորս վաշտ՝ Զէյթուն, մի վաշտ՝ Էլպիսութան, մի մի գունդ՝ Կօկիսուն, Կապան, Քընչիֆլի: Այս բոլոր զինւորների վիճակը քաղաքիս զինւորներէն շատ աւելի ողորմելի է: Զէյթուն գտնուող զինւորները սաստիկ դժգոհ են և հայհոյելով անէճք կը կարգան իրենց փատիշահին: Զէյթունի ապստամբութեան ժամանակ այն աստիճան դժգոհ և գրգռուած էին, որ չէին ուզեր Զէյթունի անունը արտասանել. սակայն վերջերս բռնութեամբ շօսէի ճանապարհը շինեցին և այժմ զօրանոցը կը վերանորոգեն անտանելի աշխատութեամբ:

Կահանգիս ոստիկանութեան Ալայ պէյը օգոստոս 9 թուին Բերիայէն Մարաշ եկաւ և մի շաբաթի չափ մնալով մեկնեցաւ Զէյթուն: Օգոստոս 23-ին դարձեալ քաղաքս հանդիպելով՝ վերագործաւ Բերիա. չը

կարողացանք հասկանալ ասոր պատճառը: Ալայ պէյի սոյն պտոյտով շատեր կարծեցին թէ խաղաղութիւնը պիտի հաստատուի, բայց հակառակը տեղի ունեցաւ: Հետեւեալ օրը ամենախիստ կերպով սկսուեցաւ սուրբ հաւաքուիլ թէ ուրիշներէն և թէ թիւրքերէն: Օրական անուշալի հարիւր հոգի անխտիր քրիստոնեայ կամ մահմետական կը բանտարկուէին. ով չունէր դրամ՝ տան կահարասին կամ ապրուստի վերջին մնացորդը վաճառել տալով կըստանային իրենց պահանջները:

Այս բոլոր խտուութիւնները գործադրուեցան միմիայն սուլթանի տարեդարձի առիթով գէթ մի-մի ամսաթոշակ վճարելու համար կառավարական պաշտօնեաներին, ոստիկաններին և զինւորներին. 11 ամիսներէ հետէ ոչ մի դրամ չեն ստացած կառավարութեան կողմէ որպէս ամսավճար: Մինչև այժմ ոյգ բոլորը կապրէին հայերէս յափշտակած անհաշիւ կողպուտներով, սակայն այժմ արդէն սպառուած լինելով՝ ամբողջովին անօթութեան և խեղճութեան մէջ կը գըտնուին: Թիւրք խուժանը և զինւորները նախկին արարքներէն քաջալերուած, և կամ լաւ ևս, այդ բոլորի համը բերանները մնացած՝ վայրենի ցանկութիւններ կը յայտնեն նորէն կոտորածներ և թալանումներ առաջացնելու: Միայն Զէյթուն գտնուող զինւորները զգոյշ եղան այդպիսի փափաքներ և մտքեր ունենալէ: Հաւաքուած դըրամները չը բաւելով պաշտօնեաների և զինւորների մի մի ամսականի համար՝ միայն հայ վաճառականներէ 3-4 հարիւր մէճիտիէ փոխառութիւն ըրին:

Այդ օրեր նոր կոտորածի լուրեր տարածուեցան ամեն կողմ. իբր թէ հրահանգներ են եկեր սուլթանի կողմէ պատրաստութիւններ տեսնելով նորանոր ջարդեր առաջ բերելու Կիլիկիայի գլխաւոր տեղերը:

Օգոստոս 23-ին Զէյթունի քրիստոնեայ Գայմագամը քաղաքս դալով 27-ին մեկնեցաւ դէպի Ուլնիայ: Քրիստոնեայ Գայմագամի առաջին գործերէ մին եղած է պահանջել նուէրի անուան տակ, որպէս պատերազմական հատուցում՝ սուլթանի կողմէ Զէյթունցիներին վաճարուած 2000 ոսկու գումարը: Ալի փաշան և ուրիշ թիւրք պաշտօնեաներ Զէյթունցի մի քանի իշխանների և կրօնականների հետ համաձայնութիւն գոյացնելով՝ որոշեր են այդ գումարը յոտկացնել Զօրանոցի վերաշինութեան: Այդ եղանակով արդէն գործադրութեան սկսել են, և նախապէս տէր Կարապետ անունով թըրքասէր քահանան, իր նման մի քանի իշխանների հետ միասին՝ հիմնարկութեան առաջին օրը ներկայ կը գըտնուի և պահանջի չ կը կարգայ: Նորընտիր Գայմագամը եղելութիւնը իմանալով՝ այդ գումարը խիստ կերպով յետ կը պահանջէ: Զէյթունի ժողովուրդը զայրացած է և կուզէ գործադրուած տեսնել այն պայմանները, որոնք իրենց արգար իբաւունքն են և որոնց համար զոհեր են այնչափ թանկագին կեանքեր, թափեր են այնքան արիւն: Այս նպատակով գիմումներ եղած են ժողովուրդի կողմէ նորեկ Գայմագամին:

Յուշալի դէպքեր մինչև վերջին օրերս անպակաս են եղած հայերի գլխէն, ինչպէս բռնաբարում, սպանութիւն, հարստահարութիւն ևն: Ռճրագործներ, կեղտոտներ միշտ անպատիժ մնացեր են և պաշտօնեաների կողմէ քաջալերութիւն ու պաշտպանութիւն գտեր: Թիւրք կառավարութիւնը վերջերս հրամաններ արձակեց՝ թէ ով որ հայ աղջկան հետ ամուսնանալու լինի՝ զինւոր չը պիտի գառնայ, և այս պատճառով շատ թիւրքեր կը հետամտին հայ աղջիկներ գտնել: Կառավարական պա-

լատի մօտ մի տաճիկ ֆախի տան մէջ կը գտնուին 10-ի չափ հայ գիւղացի աղջիկներ, որոնք երկիւղէն իսլամութիւն ընդունած են և կամուսնանան թիւրքերի հետ. մի բանի ամիս առաջ Տիւանլի թաղէն 15 տարեկան մի հայ աղջիկ բռնի առևանգուելով զրացի հազարապետի կողմէ՝ օգոստոս 15-ին դարձեալ բռնութեան աակ նիւքեա հէ եղած սոյն հազարապետի հետ: Սոյն օրինակ դէպքեր միշտ կը պատահին և ոչ ոք համարձակութիւն չունի բողոքելու:

Օգոստոս 8-ին Տէր Ստեփանեան Աւագ և ուրիշ երկու հայեր մի ոստիկան առած՝ միասին կը գնան ազատ իրենց այգիները պտակելու համար: Այդտեղ Այգաճըլ օլուխի գիւղացիներէն 12 զինուած թիւրքեր կը յարձակին ասոնց վրայ և կուղեն սպաննել: Ոստիկանի դիմադրութեան շնորհիւ՝ առանց մի փնաս հասցնելու կը հեռանան: Սակայն մի քանի ժամ յետոյ, ոստիկանի հետու գտնուած միջոցին, մի թիւրք գիւղացի յանկարծակի կը յարձակի Աւագի վրայ և գլխին ու թիւրքի դաշոյնի ծանր հարուածներ կը տայ. մինչև ոստիկանի օգնութեան հասնիլը՝ արդէն ոճրագործը խոյս կը տայ: Քաղաք գալով Միւշիրին բողոքեցին, այսու հանդերձ անպատիժ մնացին այդ թիւրք գիւղացիները:

Ղոտորածի տաճն սպանուածների անունները կառավարական տոմարներէն առանց կաշառքի չեն աւերեր: Տեղի թիւրք ժողովուրդը կաշխատի խառնակութիւնները միշտ անպակաս անել, որպէս զի պատճառ ունենալով զինուորութեան չը գնայ հեռու տեղեր: Անցեալները Պօլիսէն մի հեռագրով պահանջուած էր տեղիս թուրքերի զինուոր դառնալը և հորի եղած դէպքին պատերազմի գնալը. իսկ հակառակ պարագային՝ սուլթանը ստիպուած է ընդունիլ և գործադրել այն ամեն պահանջները՝ որոնք Եւրոպայի կողմէ կառաջարկուին: Թիւրք մեծամեծները հաւաքուած պատասխանեցին թէ նախ անհրաժեշտ է ցրուել կամ ոչնչացնել Զէյթունը, որպէսզի իրենք անվրդով գնան ուր որ հարկ կը տեսնուի:

Օգոստոս 4-ին կառավարութեան կողմէ՝ 5-ական մէծիտ ճանապարհածախս տրուելով՝ թապագեան և մերձէնեան քահանաները ուղարկուեցան Ույնիա հանդարտեցնելու ժողովրդային գրգռութիւնները և համոզելու որ հանգիստ մնան: Այդ օրեր նոյնիմաստ մի հեռագիր ևս Պօլսի պատրիարքական փոխանորդէն եկած էր: Յետոյ մեզ հասկանալի դարձաւ որ տեղիս թիւրքերը հեռագրեր են Պօլսի՝ թէ Զէյթունցիք հանգիստ չեն մնացած և միշտ այս ու այն կողմ կասպատակեն. մի բան, որ բոլորովին սուտ է. այս կերպով կուզեն մի կոտորած ևս անել քաղաքիս մէջ:

Մօտաւորապէս երկու շաբաթ առաջ քաղաքիս բոլոր թիւրք մեծամեծները պալատը հաւաքուելով, առանց մի հայ ներս լծողներու՝ մեծ ժողով ըրին. ոչ ինչ չը կարողացանք հասկանալ, սակայն թիւրքերի երեսները շատ թթու էին: Ժողովէն երկու օր յետոյ՝ 30-ի չափ գանձն չափ ու շնք ցրուելով քաղաքիս ամեն կողմերը, մի բան որ առաջին անգամը տեղի ունեցաւ այսպէս, թէ թիւրք և թէ հայ, անխտիր, ով կը կուռէր կամ կը պողպոռար փողոցներու մէջ ծեծելով կը բանտարկէին: Այս ժողովէ յետոյ քաղաքիս գրութիւնը բոլորովին փոխուեցաւ, մի թիւրք ջոբպան մի հայու գլխին զարնելու պատճառով՝ երեք ամիս բանտարկութեան դատապարտեցին: Գարձեալ մի թիւրք մէկ ուրիշ հայու հայհոյան միջոցին՝ այդ գանուն չափուները վրայ հասնելով՝ սաստիկ ծեծեցին և

5-6 օր բանտարկեցին: Քաղաքիս շուրջը, հեռու տեղեր յատուկ պահապաններ դրուեցան, որով առ այժմ ապահովութիւնը կը տիրէ: Հայերը ազատ իրենց այգիները կերթեկեն. ոչ մի թիւրք չի համարձակիր փնասել և փնաս հասցնողը կը պատժուի: Կառավարութեան կողմէ հայերին վրաններ կը արուին այգի գնալու համար, որովհետև այգիների տները կամ քանդուած են և կամ վառուած: Գիւղացիները շատ խեղճ, մերկ և անօթի վիճակ ունին. ահա ձմեռը կը մօտենայ, ոչ ապաստանելու տեղ ունին, ոչ հագուստ և ոչ ուտեստ:

**ՆԱՍԱԿ ԱՆԷՔՍԱՆԴՐԵՏԻՑ.**

Մէկ ամիսէ աւելի է տեղս թափուած են Սուրբայէ և ներքին գաւառներէ հաւաքուած աճէ մի (անփորձ) զինուորներ, որոնք իրենց ներկայութեամբ ահ ու սարսափ կը ձգեն քաղաքս և շրջակաները: Բազարի խանութները օրական երկու երեք անգամ, յանկարծական դէպքերի շնորհով, կը գոցուին:

Օինուորների թիւը առհասարակ 5-800-ի կը հասնի, որ և հետզհետէ կը շատնայ. խուճը խուճը շրջագայելու կելնեն փողոցներն ու շուկան, և օրական, առնուաղն, 6-7 խանութ կը թալանեն: Ղաճառական, արհեստաւոր, մրգավաճառ երկիւղի մէջ են և այդ պատճառով իրենց խանութները կիսով չափ բացած են, հակառակ դէպքին, տները ապաստանելու համար: Ամէն օր կուռներ տեղի կուռնեան զինուորու, իրենց սպաննու և ժողովրդի մէջ. կառավարութիւնը շատ անգամ անկարող կը գտնուի զանոնք ղապելու համար:

Անցած ուրբաթ օր մզկիթի մէջ պաշտօնական աղօթք կատարուած միջոցին՝ Փէլահները, համաձայն սուլթանի կողմէ տրուած իրատէի, կը մտնեն մզկիթը նամազ կատարելու: Թիւրքերի կրօնական օրէնքը թոյլ չի տար Փէլահներուն մզկիթ մտնել, ըստ որում նորա չեն համարուիր որպէս ճշմարիտ մահմետականներ: Թիւրք մոլեռանդ ժողովուրդը, հակառակ սուլթանի իրատէին, կը դժկամակէր, և շատեր պղծուած կը համարին այն մզկիթը, ուր Փէլահները աղօթք կը կատարեն: Այդ օրը, ճիւղաւա նամազ իի տեսն, վերոյիշեալ վայրերի զինուորները պաշտօնական հետ համաձայնելով՝ կը գիմեն մզկիթ և կատարութեամբ կը յարձակին այնտեղ գտնուող Փէլահների վրայ: Ընդհանուր աղմուկ և սարսափ կը տարածուի ամբողջ քաղաքիս մէջ. քրիստոնեաները գոցելով խանութները՝ անմիջապէս կը փախչին իրենց տները: Կառավարութիւնը զօրք և ոստիկան կուղարկէ Փէլահները պաշտպանելու համար: Մի միւլաղիմ իր հետ ունենալով մի քանի տասնեակ կանոնաւոր զօրքեր՝ կը հասնի կուռավայրը և թիւրք խուճանը ցրուելով՝ 3-4 գրկխաւորները կը ձերբակալէ և կուղէ բանտ տանիլ: Ասոր վրայ՝ ամբողջ վայրերի զօրքերը ու խուճանը կը հետեւին և թոյլ չեն տար որ իրենց գլխաւորները բանտարկուին. տեղի կուռնեայ բաւական ծանր կուռ, ուր միւլաղիմի գլխին բազմաթիւ հարուածներ կիջնեն: Կառավարութիւնը կը յաջողի խուճանը ցրուել և բանտարկել աւգ չորս հոգին: Այդ գիշեր անկանոն զինուորները միացած խուճանի հետ՝ կը յարձակին կառավարական պալատին վրայ և կը պահանջեն իրենց գրկխաւորները. տեղի կուռնեայ սոսկալի կուռ, ուր ծանր հարուածներ կը ստանան հարիւրապետը, փոխըր և նոյն

խակ գալմազամբ, և շատեր կը վերաւորուին: Քաղաքի հարաւային կողմը բնակող հրամանատարը անմիջապէս բազմաթիւ զինուորներ օգնութեան կը հասցնէ. սակայն մինչև կանոնաւոր զինուորների գալը՝ թիւրք խուժանը և անկանոն զօրքերը իրենց պարագլուխները բանտէն հանելով՝ կը ցրուին:


Կառավարութիւնը անկարող լինելով զսպել այդ վայրենի զօրքերը, որոնք այնքան դէպքերի պատճառ կը դառնային, կը սպասէր մի օսմ. շոգենաւի զանոնք հեռացնելու համար: Հետեւեալ օրերը եկաւ մի օսմ. շոգենաւ, սակայն երկու օր մնալով մեկնեցաւ, առանց զինուորները տանելու. պատճառը՝ նաւապետը փոխադրութեան վարձը կանխիկ կը պահանջէր, իսկ կառավարական սնտուկը արդէն շատոնց դատարկուած էր: Այս դէպքը բոլորովին յայտնի արաւ սուլթանի կառավարութեան սնանկութիւնը: Ամբողջ ժողովուրդը, պաշտօնեաներն ու զինուորականները բացարձակ կերպով կը խօսէին կառավարութեան ընկած, սնանկացած կացութեան մասին: Ոստիկաններն ու զինուորները բարձրաձայն դժգոհութիւն կը յայտնէին արտասանելով թէ 10-12 ամիսներէ հետէ մէկ ամսաթոշակ իսկ չեն ըստացած. անօթութեան, թշուառութեան չափն անցաւ և այլն: Այս թող ինքը, բարեգուլթ ալլահը, տեսնէ և ուզորմի սուլթանին:

Երէկ մէկ ուրիշ նաւ ևս եկաւ, որ առաջինին նըման 1,000 օսմ. ոսկի կանխիկ կը պահանջէ 800 զինուորները Խէմէն փոխադրելու համար. կառավարութիւնը կը խնդրէ որ վարձքը յետոյ ստանայ, սակայն նաւապետը չէ ընդունած:

Շուկայի մէջ գրեթէ բոլոր խանութներն ալ գոց են. տեղացին յուսահատ է իր այս անորոշ գրութենէն: Անկանոն զօրքերն ալ հետզհետէ կը կատաղին, որովհետեւ անօթի և մերկ են: Կառավարութիւնը՝ անօթի, զօրքը՝ անօթի, գնալով ժողովուրդն ալ կը սնանկանայ և կը քայքայուի անտեսապէս:

Վիմանանք թէ ֆէլլահները սոյն դէպքերէն զայրացած, միահաւան որոշեր են առաջիկայ ուրբաթ օրը դիմել մղկիթ. հակառակ պարագային՝ կրակ անելու և մի մեծ արիւնահեղութիւն ընելու նպատակով: Ֆէլլահները բացարձակ կերպով կաղաղակեն թէ կամ սուլթանը մեղմէ զօրք չը պիտի առնէ և կամ ազատ պիտի մտնենք ճամփն, ապա թէ ոչ մենք Անդղիոյ հպատակութիւնը կը պահանջենք:

Վրէժ.



Լիճ գիւղ, 6 | 18 օգոստոս 96.

Լիճ գիւղի աւերումը արդէն անցողակի կերպով տեղեկագրուեցաւ «Հնչակի» մէջ:

Լիճ գիւղի աւերումէն յետոյ, ժողովուրդը սկըսաւ հարստահարութեանց ենթակայ ըլլալ և աղքատութեան մէջ տառապիլ, բայց դժբաղդաբար այս անգամ Լիճ գիւղի քանի մը վատ հայերու ձեռքով որոնք գիւղի աղաներն են: Խիստ ցաւալի տեսարան մ'է ասիկայ: Աղքատիկ ժողովուրդը կիսաւեր տուներուն մէկ անկիւնը կծկտած անօթութենէ և մերկութենէ կը տառապի և սովամահ կը ըլլայ, անգին դիւղին աղաներն վայրենի թուրքերուն հետ միացած աղքատներուն պարտէզներն ու արտերը կ'իւրացնեն ըսելով թէ՝ «տէրութեան պարտ ունէիք մենք վճարեցինք և քանի որ ստակ չունիք, փոխարէնը կառուածնիդ պիտի առնեմք»:

Լիճ գիւղի աւերումը արդէն անցողակի կերպով տեղեկագրուեցաւ «Հնչակի» մէջ:

Վարձեալ ի նպաստ Լիճ գիւղիս թշուառ աղքատաց յիսուն ոսկիի գումար մը խրկուած էր: Աղաները այս գումարէն փարա մը անգամ աղքատներուն չը տալով, ամբողջը իրենց որովայնը կը նետին: Գիւղին երիտասարդութիւնը այս վատ արարքին դէմ կը բողոքէ, բայց աղաներն իբր յեղափոխական զանոնք բռնել տալով կը բանտարկեն, և 20 ոսկի տուգանքով կը փրկուին: Ո՞ր մէկ վատ արարքնին կարելի է գրել:

Վիմանապէս այդ աղաներն էին, որ խուժանին յարձակման ատեն իսկոյն իրենց ընտանեօք կրօնափոխ եղան ամենայն յօժարութեամբ, բայց յետոյ ամենալնուն հալ եղան: Այդ անձանց մէջ ամենագարշելին, ամենավատը Գրիգոր Զպլեանն է, որ ամէն վատութիւն ըրած է:

ԱՐԱՐԿԵՐՑԻ ՂԱԶԱՐ ԽՕՁԱՆ.

27 սեպտեմբեր. 96

Կոտորածէն ետքը Այնթապ ընդհանուր անկման մէջ էր. և սակայն մի սիրտ կար, որ ընկած չէր. այդ՝ Արարկերցի Ղազար խօժայի սիրտն էր: Ղազար խօժան, Այնթապու գօրէճի հայերէնի ուսուցիչը, ազգի այդ խելակորոյսը, այդ խենթը, կարճահասակ, վառվառն աչքերով և լայն ու խոհուն ձակատով մի երիտասարդ էր, ձակատ, ուր հա յրեն ասիբութիւն և ազատութիւն բառերը և եթ կը կարդացուէին: Ղառուած ազատութեան սիրով՝ որոշած էր գնալ Զէյթուն և այնտեղ ազգի անձնուէրների հետ զոհել իւր կեանքը. սակայն չկարողանալով իւր որոշումը իրագործել, մտածեց անցնիլ Եւրոպա և ամեն տեղ յուզում յառաջ բերել ի նպաստ հայկական դատին: Ես, նորա աշակերտը, և այլ անձնուէր հոգիներ, միացանք անոր հետ և կազմեցինք մի խմբակ՝ պատրաստ ճանապարհ ընկնելու դէպի Խիչնտէրուն: Ղազար խօժան տխուր էր, և ես, նորա աշակերտը, չէի համարձակեր պատճառը հարցնել. միայն, դժուար չէր կարդալ թէ նորա և թէ ընկերների դէմքերի վրայ քաջութիւն, անձնուէրութիւն և ազատութիւն բառերը: Մեկնումէն քիչ առաջ՝ մտայ Ղազար խօժայի սենեակը, որ, նստած գրասեղանի առաջ՝ հետեւեալը կը գրէր մի կտոր թուղթի վրայ:

«Սերելի եղբայր,

Այս գիշեր կը մեկնիմ: Մի վճատիր: Զէյթերդ առի, վասնդի անհրաժեշտ պետք ունէի անոնց: Երկար գրելու ժամանակ չունիմ. միայն եղբայրական խրատս այս է քեզ. աշխատէ մինչ պատեհ ժամ է, յարատեւ, անգուլ և անդադար ոգւով, որպէսզի հասնիս նպատակակէտիդ: Զգտէ դէպի այն, ինչ որ պիտի լինի մի անգամայն կենացդ պայքարը: Գարձեալ կըսեմ, մի վճատիր մեկնելուս համար: Այսչափ: Զքեզ սիրագին համբուրող եղբայրդ: «Ստորագրուած» Ղազար Տիրատուրեան:»

Մի քանի պակասաւոր զէնքեր և մի քիչ պաշար կը կազմէին մեր ճամբու բեռը: Վեց հոգի էինք. Ղազար Տիրատուրեան Արարկերցի, Յարութիւն Վիւղեան Վապանցի, Աբրահամ Փանոսեան քէսապցի,

Սերգրակ Վարժապետեան Եարիուղցի, Աշճը Փանոսը և ես: Ճանապարհ ընկանք. մուծը սարսափելի էր. հինգ ժամէ վերջ Վափուծրան կոչուած ճահիճը հասանք, որ անանցա նելի էր մի քանի օրեր առաջ տեղացող անձրևներէն: Աննկարագրելի նեղութիւններէ յետոյ՝ կարողացանք անցնիլ այդ տեղէն և առաւօտուն կանուխ մեզ գտանք մի ընդարձակ դաշտի մէջ: Թէև ծպտուած տաճկի զգեստներով, սակայն և այնպէս մի քանի երկրագործներ հասկացան մեր քրիստոնեայ լինելը, և կը կրկնէին իրարու. «կեափուր է լո» անցանք մօտերէն զգուշանալով տեղի չը տալու ոճէ կուռի, ըստ որում գիւղերի մօտ էինք: Բայց ահա նոքա, մեր անցնելէն անմիջապէս յետոյ՝ վազեցին գիւղ պուտալով. «եէթիլին, կեափուր կէլիօր, Չէյթուն կեափուրը կէլիօր» (հասէք, կեափուր կանցնի, Չէյթունցի կեափուրներ կանցնին, չը վատահելով մեր գէնքերուն՝ խոյս տուինք ընդհարումէ և ձորին ճամբան բռնեցինք, սակայն շատ չանցաւ և ահա գիւղերէն հարիւրի չափ քրդեր բարակներով մեր ետևէն ընկան «կեափուրը, թէսլիմ օլուն» պոռալով: Սակայն երբ անսան որ մենք զիմադրելու փորձեր սկսանք ցոյց տալ, իրենցմէ երկուսը ուղարկեցին մեզ առաջարկելով որ իրենց մօտ հիւր լինինք և ապա ապահովութեամբ ճանապարհ զրուինք, ըստ որում կըսէին. «եթէ հիմա զձեզ թողնելու լինինք այն ժամանակ Տէրութիւնը մեզ պիտի բանտարկէ, մեզ հըրաման տրուած է որ չթողունք որ ուէ մի քրիստոնեայ անցնի ասկից:»

Հասկանալով որ թրքական թակարդ մէջ այդ մեզ համար, խորհուրդ արինք չընդունել առաջարկութիւնը և մինչև վերջը կուռիլ: Այն ինչ այս որոշման էինք յանկարծ ահա տասնի չափ քրդեր յարձակեցան մեր վրայ խարդախութեամբ և յանկարծակիի բերելով բռնեցին մեր ընկերներէն չորսը, մնացինք Տիրատուրեան և ես: Չէնքերնիս քաշեցինք թող տուէք ընկերները, գոռացինք: Թող տուին երկուքը, և կուռի սկսաւ: Երկու կողմանէ կրակ եղաւ. քրդերը տեսնելով մեր սաստիկ զիմադրութիւնը, յետ քաշուեցան, տանելով իրենց հետ մեր երկու ընկերները զորս սկսան մերկացնել: Նոցա սպառնացող վտանգը տեսանք. կորսնցնելու ժամանակ չկար. յարձակեցանք հրացան ի ձեռին: Քիւրդերը այդ անվան յարձակումէն շուարած՝ սկսան փախչիլ, թողնելով մեզ մեր երկու ընկերները, միայն մերկ վիճակի մէջ:

Հաճի Փանոսը լաւ որսորդ լինելով զէնքս անոր տուի: Սակայն կուռի աղմուկը ամեն կողմ տարածուեցաւ և շուտով ամեն կողմերէն խուճը խուճը կը գիւմէին կուռի վայրը: Սեղրակը անզէն մնացած՝ փախաւ, ինձ ալ առաջարկեցին հետանալ. ծանր էր ինձ ընկերներէս բաժնուիլ, սակայն ստիպողական էր այդ, որովհետև ձեռքս ոչ մի զէնք չունէի: «Մնաք քարով» ասելով հեռացայ, սակայն ճանապարհին վրայ հովիւ մը հանդիպելով ստիպուեցայ թուփի մը ետին ծածկուիլ: Բազմութիւնը 6-7 հարիւրի հասաւ. քաջ ընկերներս կուռեցան առաւօտէն մինչև երեկոյ: Յանկարծ լսեցի քափուղի ձայն: Վերէն պուտացին, «կեափուրը ճէպխանէսի գալմամը» (կեափուրներուն ռազմավթերը հատեր է): Բոլորը միասին յարձակեցան, հրացանները հարիւրներով պայթեցան: Այս ժամ ևս... ձայն ձուն չմնաց... ընկերներս զոհուած էին... նոցա մարմինները անթաղ մնացին դաշտին մէջ և այն տեղ վայրի անասուններուն կեր եղան: Թող միշտ անմո-

ռաց լինի նահատակներու և հերոսներու յիշատակը մեր սրտերուն մէջ:

Տիրատուրեանի կեանքը ամբողջ օգտակարութեամբ անցած է: Նա կը վայելէր ամենու սէրն ու յարգանքը: Քրդերը գովութեամբ կը խօսէին անոր և ընկերներու քաջութեան վրայ. կըսէին թէ իրենք դեռ չէին տեսար այդպիսի քաջ ու յանգուզն կեափուրներ:

**ՔԱՂՈՒԱՅՔՆԵՐ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ.**  
Daily News-ից

Թղթ. — Պօլիս. Տաճիկ կառավարութիւնը արտօնած է Ամերիկայ գնալ այն կանանց և մանկանց, որոնց ամուսինները Ամերիկայ կը գտնուին: Այս հիման վրայ դաւառական իշխանութեանց հրաման տրուած է արգելքներ չի յարուցանել այդպիսիների ճամբորդութեան. ընդ հակառակն, խիստ հրամաններ տրուած են նոյն իշխանութեան խստիւ արգելու գաւառացի հայերի Պոլիս գնալը: —

Հոսմ. — Պուճիէնո Լուուրիա ճանապարհ ելաւ դէպի արևելեան ջրերը՝ իտալական նաւատորմի ճետ միանալու համար, որ բազկացած է այժմ ութ մարտանաւերից, առանց հաշուելու Պոլսոյ երկու պահակ նաւերը:

Աթէնք. — Անցեալ շաբաթ 5,000 տաճկական զօրք հասան Սելանիկ, որոնք կուգային Տարտանէէն և Սև ծովէն, և անմիջապէս զետեղուեցան Պուլկարական և Սերպիական սահմանագծերի վրայ:

Վ. Պօլիս. 17 Հոկ. — Գեսպանները երէկ ի ժողով գումարուելով որոշեցին կրետէ ուղարկել զինուորական կորդոններից բազկացած մի պատգամաւորութիւն՝ կղզոյն ոստիկանական վերակազմութեան օգնելու համար: Տաճկական կառավարութիւնը նոյն պաշտօնով նըշանակեց երկու մարդիկ. մին Թէֆֆիկ պէյ, Այտրնի վիլայէթի ոստիկանական հրամանաւարը, միւսը Մուստաէֆէնտի, Ռօստոսոյի ոստիկանական հրամանաւարը:

Մարբէիս և Միննէպօլիս մարտանաւերը արդէն Չիւուսիա կը գտնուին, ուր օր աւուր կսպասուին Սան Ֆրանչիսքօ և Բանդոֆօ մարտանաւերն ալ: Կը ծանուցուի թէ շուտով Պ. Տէրրէլ Չիւուսիա պիտի գայ Սէլֆրին ծովակային հետ խորհրդակցելու համար:

Աթէնք. 17 Հոկ. — Կը ծանուցուի թէ սուլթանի անձնական գանձու նախարարը Միքայէլ էֆ. փախեր է Վ. Պոլսէն:

Աթէնք 18 Հոկ. — Ամերիկեան պահակ մարտանաւը մտադիր է բռնի կերպով Տարտանէլ մտնել: Թրքական արկու սորպիլակիրներ դէպի Գարտանէլ և երկուք ալ դէպի Չիւուսիա գնալու համար ճանապարհ ելան: —

Պետերբուրգ. 15 Հոկ. — Ժամանակէ մը ի վեր Թիֆլիսի մէջ տեղի ունեցած էին խորհրդաւոր սպանութիւններ. զոհերը ընդհանրապէս վաճառականներ էին: Շատ մը հարուստ հայեր ալ մահու սպառնալիքով անստորագիր նամակներ կստանային՝ եթէ մերժէին պահանջուած մեծամեծ գումարներ: Միւսնոյն ժամանակ կարգ մը անհատներ ալ քաղաքին ամեն կողմերը կը շրջէին Տաճկաստանի հայ կարօտեալների անունով գրամ հանգանակելու անուամբ. և իբր վկայութիւն իրենց պաշտօնին՝ կեղծ վկայականներ ցոյց կուտային, որոնք իբր թէ Լօնտօնի Հայ Յեղափոխական Ասիտէի կողմից տրուած էին: Սակայն ուստական ոստիկանութիւնը այժմ

ստուգած է որ այդ սպաննութեանց և կեղծ վկայականներին հեղինակները կը պատկանին մի աւագակային խումբի, որը բացարձակապէս զուրկ է ունէ քաղաքական բնաւորութենէ. միայն և միայն գողութիւնն ունի իրեն նպատակ: Այդ խմբի պետը, մի ոմն Ղևոն Ամինօֆ, որ արդէն երկու անգամ փախած է Սախալէն կղզիէն, ձերբակալուած է այժմ իւր երկու ընկերներով: Այդ երեքը միատեղ ձօտ օրերս Թիֆլիզի զինուորական դատարանի առջև պիտի կոչուին:

Վիէննա, Շաբաթ երեկոյ. — «Նեոյէ Ֆրայէ Պրէս», թերթի մի մասնաւոր հեռագիրը կը ծանուցանէ որ Խարկոֆ, Օտեսայ և Կիէֆ զինուորական գաւառների Ռուսական բանակները հրաման ստացած են ամբողջացունելու իրենց պատերազմական զօրութեան պահասաւոր սպաները գրօշի տակ հրաւիրելով թէ հանգրտեան և թէ արտօնութեամբ հրաժեշտի մէջ գրտնըւողները: Այս քայլը սկզբնական ձեռնարկ է ռուսական ուժերու մօբիլիզացիայի (շարժման մէջ դնել) ամբողջացման: Թղթակիցը կը յաւելու թէ Ռուսիա կը փափաքի ստանալ Եւրոպայէն մի մանդատ և Պօլսը գրաւելու՝ իբր միջոց կարգը վերականգնելու:

**ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.**

1. Ներկայիւս յայտարարում ենք պաշտօնապէս, որ Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնն ամեն ժամանակ խստիւ հակառակ է եղել այն ամեն տեսակ բռնի ու սպառնական միջոցներին, որոնց գործադրութեամբ թէ Կ. Պօլսում, թէ Թիֆլիսում և թէ ուրիշ տեղեր Հնչակեան անուան տակ այլ և այլ շահախնդիրներ և կամ Հնչակեան անուան անարժան անհատներ դրամներ են ժողովել: Ի նկատի ունենալով տարածված թիւրխնացութիւնները, մենք կրկնում ենք սոյն յայտարարութիւնը, բացարձակ կերպով բացասում ենք յիւլափոխական գործնականի մէջ այլ և այլ մութ աղբիւրներից ծնունդ առած այն բռնի ու սպառնական միջոցները որ, վերջին հաշուով, փաստակար ու անպատւաբեր են յիւլափոխական գործի շահին: Ինչպէս անցելու, նոյնպէս վերջերս Աւետիս Պօլսեանի, պատրիարք Ազարեանի և ուրիշների նկատմամբ եղած սպառնալիքները գործադրված են Հնչակեան անուան քօղի տակ ծածկվող շահամոլ բաղախնդիրների ու խաբեբանների կողմից, որոնց այդ ստոր արարքն ուրիշ բան չէ, եթէ ոչ ազգային լիբր աւագակութիւն:

2. Արանով պաշտօնապէս յայտարարում ենք նաև, որ տեղի չը տալու համար այլ և այլ կեղծիքի ու խաբեբայութիւնների, ներկայ թւից ըսկած Հնչակեան Կուսակցութեան բոլոր Մասնաձիւղերի նախկին կնիքներն անվաւեր են համարվում և նրանց փոխարէն՝ Կենտրոնիս կողմից կը հաստատվեն նորաձև կնիքներ:

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԵՆՏՐՈՆ.  
23 հոկտեմբեր 1896, 1 Օնդօն.

**ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.**

Հնչակեան Կուսակցութեան Պատգ. Ինդհ. Ժողովը ներկայիւս կը յայտարարէ, որ՝ համաձայն էր երկրորդ նիստին մէջ կայացուած որոշման՝ այն ամեն Վ կայազրերը, որ մինչև ներկայ թիւը կը կրեն Հնչակեան գործիչներն՝ իբրև ներկայացուցիչներ, պատգամաւորներ կամ գործադիր անդամներ, այլ ևս կորցրած են իրենց զօրութիւնը և կը համարուին չեղեալ: Ներկայ թւէս սկսեալ ամեն հարկ եղած Հնչակեաններուն կուղարկուին պաշտօնական նորոգուած Վ կայազրեր Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնի կողմէ:

17 Սեպտեմբեր 1896, 1 Օնդօն.

Կ ու լ ա կ ց ու թ ե ա ն ս Գ ան ձ ար ան ու մ Հ ն ո ճ հ ա կ ա լ ու թ ե ա մ ք ս տ ա ց վ ե լ են հ ե տ և ե ա լ գ ու մ ար ն Ե ռ ր Ե .

Ռ Ո Ւ Ս Ա Ս Տ . — Բ ա լ . Հ ն չ ա կ ե ա ն Մ աս ն ա ձ ի լ զ ի գ ան ձ ար ան ի հ ա շ ի լ ր , 1896 թ . մ ար տ 1-ի ց ս կ ս ա ծ մ ի ն չ և 1896 թ . օ գ ո ս տ ո ս ու ն ե ց ե լ է Մ ու լ ա ք 2234 ը ու թ լ և 12 կ ո պ . Ե . ք — 2213 ը . 55 կ : Ն ոյ ն Մ աս ն ա ձ ի լ զ ր ս տ ա ց ե լ է . բ ժ ի չ Բ ե ր ան յ ' 1000 ը բ , Բ գ ո վ ն ց ի 500 ը . Ա ը շ -ն 30 ը , Ա գ ու Մ ե լ լ ք ի մ ի ջ ո ց ո վ 8 ը . , Հ ար ի լ ր ա պ ե տ 600 փ ամ փ ու շ տ , Ս ի ր ար ի մ ի ջ ո ց ո վ 6 ա տ ր ձ ան ա կ :

Շ Վ Է Յ Յ Ա Ր Ի Ա . — Ժ ը ն է վ ի ց , Տ . ք . -ի ց 11 Փ ը , 20 ս ա ն տ . , Ա . 5 Փ ը . , Տ . ք . -ի վ ի ձ ա կ ա հ ան ու թ ի լ ը ն ի ց մ ն ա ց ա ծ 5 Փ ը . : Լ օ գ ան ի ն ու ա գ ա հ ան գ է ս ի ց մ ն ա ց ա ծ 3 Փ ը . :

Թ Ի Ի Բ Բ Ի Ա . — Բ . ք ա լ ա ք ե ց Հ ար ու ն - Է լ - Բ ա շ ի տ ի ձ ե ո ք ո վ 11 ա ն գ լ . ս կ ի :

... Մ ի ո ս ան ի ղ ա կ ան չ ը ջ ան ի ց 6 ա ն գ . ս կ ի , 6 շ ի լ . 5 պ : Ք Ր Ա Ն Ս Ի Ա . — Բ օ շ է ն ի ց , « Վ ա հ է » -ի ց 5 Փ ը . :

Ա Մ Ե Բ Ի Կ Ա . — Մ ար գ . Ս ի մ է օ ն ի ց 2 գ ո լ ա ր :

Բ Ո Ւ Լ Գ Ա Ր Ի Ա . — Ռ ու ս ձ ու զ ի Մ աս ն ա ձ ի լ զ ր ս տ ա ց ե լ է : Շ ա ք է ի խ ու մ ք է ն 214. Փ ը . Ժ ե ր ա յ ի խ մ ք . 207, Փ ը . 95 ս ա մ . Ե ղ ք ա յ ր ա ս ի ր ա ց . խ մ ք . 174. Փ ը . Է թ ե ի ի . խ մ ք . 91. Փ ը . 65 ս ա մ . Ի շ խ ան Բ է ն ի կ ի . խ մ ք . Փ ը . 60. Թ ն գ ան օ թ ա ձ ի գ խ մ ք . 55. Փ ը . Զ է յ թ ու ն ի . խ մ ք . 30. Փ ը . Ս ի ի ս տ ր է ի . խ մ ք . Փ ը . 20. Հ ա ձ ի . Ա . է . խ մ ք . Փ ը . 3, Մ ի ու թ ե ն ա կ ան է խ մ ք . Փ ը . 10 Տ . ի ձ ե ո ք ո վ Ա ը ու ս ե ա կ է . 22. Փ ը . 70 ս ա մ . Յ ու լ ի ս ի 15 17. Ա պ տ ա կ է 2. Փ ը . Շ ա լ ա ր շ է ն 2 Փ ը . Գ ան ձ ան ա կ ի հ ա տ յ թ 40 Փ ը . Վ ա ա ն ա յ է Յ Մ . է 20 Փ ը . Բ ա հ օ վ ա է Ա . Շ . է Ա ղ յ ան ձ ե ո ք ո վ 20. Փ ը . Շ ի լ թ օ ի մ է ջ հ ա լ ա ք ու ա ծ Ս . Ա . ի ձ ե ո ք ո վ 19. Փ ը . Լ օ մ ա լ ս ն ք ա ի հ ն չ ա կ ե ա ն խ մ ք . 50. Փ ը . Ք . ք ա լ ա ք է Թ . է 50. Փ ը . Պ ր ա յ լ ա ի Ա ը ր ա ր ա տ ե ա ն խ մ ք . 90. Փ ը : Ք . Ե . Ս . ք ա լ ա ք ն ե ի է 60. Փ ը . Ս ու լ ի ն ա գ Ա . 2 ա լ ու շ ի մ ի ջ ո ց ո վ 80. Փ ը . Տ օ պ ի ղ է ն ' Ա ն տ օ ն է ն 5. Փ ը . Գ ու մ ար 1.344. Փ ը . 25. ս ա մ :

Հ ն Չ . Կ ու Ս Ա Կ Ց Ո Ւ Թ Ն Ը Ն Հ Ր Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ո Ն Ն Ե Ր .  
Ժ ո Ղ ո լ ր ի ու Կ Ա Ն Գ Ր Ա Ղ Ն Ա Ն . զ ք ք յ ի կ ր կ օ ղ ր .

Գ Ա Ր Ի Բ Ա Կ Ի .  
Ի Բ Կ Ե Ա Ն Ք Ի Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը  
Թ Ա Ր Գ . Ի Տ Ա Լ Ե Բ Ե Ն Ի Ց . Գ Ի Ն Ի Ք Ր . 50 Ս Ա Ն Տ .

Յ օ ղ ու ա ծ ն ե թ , թ ղ թ ա կ ց ու թ ի լ ը ն ն ե թ , տ ե ղ ե կ ու թ ի լ ը ն ն ե թ և գ ր ա մ ու մ ան դ ա տ ու ղ ա ր կ ե լ հ ե տ և ե ա լ հ ա ց ե ղ ո վ . —  
M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush.  
London W. [Angleterre].